

---

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

---

Ճայերի մեծ մասը չի ձգտում թռիչքներից որևէ բան հասկանալ, բացի ամենաանհրաժեշտից՝ ափից հասնել մինչև կերը և վերադառնալ: Ճայերի մեծ մասի համար գլխավորը կերն է, ոչ թե թռիչքը: Իսկ այդ ճայի համար գլխավորը կերը չէր, այլ թռիչքը: Աշխարհում ամեն բանից ավելի Ջոնաթան Լիվինգսթոնը սիրում էր ճախրել:

Բայց նման տենդը, ինչպես հասկացավ, թռչուններին հարգանք չէր ներշնչում: Նույնիսկ ծնողները անհանգստացած էին, որ Ջոնաթանն օր ու գիշեր մենության մեջ է և իր փորձերով տարված՝ նորից ու նորից սավառնում է հենց ջրի երեսին:

Նա, օրինակ, չէր հասկանում, թե ինչու իր թևերի կես բացվածքից պակաս բարձրություն թռչելիս կարողանամ էր գրեթե առանց ջանքի օդում երկար մնալ: Նրա ճախրող վայրէջքը չէր ավարտվում ջրում ընկղմվող թաթերի սովորական ճողփյունով, այլ՝ երկար փրփրադեզ շիթով, որը ծնվում էր հենց որ թաթերը կիպ սեղմած Ջոնաթանի իրանը կաչում էր ծովի մակերևույթին: Երբ նա սկսեց թաթերը սեղմած սավառնել դեպի ափ, իսկ հետո քայլերով չափել ավազի վրա թողած իր հետքը, ծնողները, բնական է, լրջորեն անհանգստացան:

— Ինչո՞ւ, Ջոն, ինչո՞ւ,— հարցրեց մայրը: - Ինչո՞ւ չես կարողանում քեզ այնպես պահել, ինչպես բոլորս: Ինչո՞ւ ջրի վրայով թռչելը չես թողնում ձկնկուլներին ու ալբատրոսներին: Ինչո՞ւ ոչինչ չես ուտում: Միայն փետուրներդ ու ոսկորներդ են մնացել, որդի՛ս:

— Մայրիկ, թող որ միայն փետուր ու ոսկոր դառնամ: Ուզում եմ գիտենալ թե ինչ կարող եմ անել օդում, ինչ՝ ոչ: Ես պարզապես ուզում եմ իմանալ:

— Լսի՛ր, Ջոնաթա՛ն, - բարյացակամ ասաց հայրը,— ձմեռը սարերի ետևում չէ: Ձկնորսանավերը կսկսեն հազվադեպ երևալ, իսկ ձուկը, որ հիմա լողում է ջրի երեսին, կիջնի խորքերը: Եթե անպայման ուզում ես սովորել, ուսումնասիրիր կերը, սովորիր սնունդ հայթայթել: Թռիչքներն, իհարկե, լավ բան են, բայց միայն թռչելով չես կշտանա: Մի մոռանա՛ թռչում ես, որ ուտես:

Ջոնաթանը հնազանդորեն գլխով արեց: Մի քանի օր նա աշխատում էր անել այն, ինչ մյուսները, ջանում էր ամբողջ ուժով, զիլ ճչում էր, կառամատույցների ու ձկնորսանավերի մոտ կռիվներ սարքում ցեղակիցների հետ, ձկան ու հացի կտորտանքի հետեւից սուզվում էր ջրի մեջ: Բայց ոչինչ չէր ստացվում:

«Ինչպիսի՜ անմտություն,— մտածեց նա և դժվարությամբ ձեռք զցած սարդինաձկան կտորը վճռականորեն շարտեց իր ետեւից ընկած ծեր, քաղցած ճային: - Ես կարող էի այս ամբողջ ժամանակը հատկացնել թռչել սովորելուն: Դեռ այնքան շատ բան ունեմ իմանալու»:

Եւ ահա Ջոնաթանը կրկին միայնակ է հեռու ծովում՝ քաղցած, երջանիկ, հարցախույզ:Նա ուսումնասիրում էր թռչչի արագությունը և մարզումների մեկ շաբաթվա ընթացքում արագության մասին ավելի շատ իմացավ, քան ամենաարագընթաց ճայն այս աշխարհում:

Ծովի վրա հազար ֆուտ բարձրացավ եւ ամբողջ ուժով թեւերը թափահարելով՝ իրեն շեշտակի նետեց խոյաթռչչի, ու հասկացավ, թե ինչու են խոյահար թռչչի ժամանակ ճայերը թևերը ծալում: Արդեն վեցերորդ վայրկյանին նա թռչում էր ժամում յոթանասուն մղոն արագությամբ, մի արագություն, որի դեպքում թևը թափահարման պահին կորցնում է կայունությունը:

Միշտ նույն բանն էր ստացվում: Ինչ ջանք էլ որ չէր թափում, ինչպես էլ ուժերը որ չէր լարում, բարձր արագության ժամանակ կորցնում էր կառավարումը:

Հազար ֆուտ վերելք: Հզոր պոկում, անցում խոյաթռչչի, թևերի լարված թափահարում եւ ուղղաձիգ անկում: Իսկ հետո ծախ թևը, վեր թափահարելիս հանկարծ քարանում էր, ինքը շեշտակի ծախ էր թեքվում, հավասարակշռությունը վերականգնելու համար դադարում էր աջ թևով թափ տալ և, կարծես բոցով բռնկված, աջ թևի վրայով գլուխկոնծի տալով՝ ընկնում էր պտուտածն անկման մեջ:

Չնայած բոլոր ջանքերին՝ վեր թափահարել չէր կարողանում: Տասը փորձ արեց և տասն անգամ էլ, հենց արագությունը գերազանցում էր ժամում յոթանասուն մղոնը, նա վերածվում էր փշաքաղված փետուրների չկառավարվող գնդի ու քարի պես ընկնում ջուրը:

Ամբողջ խնդիրն այն է, մինչև վերջին փետուրը թռչվելուց հետո վերջապես հասկացավ Ջոնաթանը, ամբողջ խնդիրն այն է, որ բարձր արագությունների ժամանակ անհրաժեշտ է բացված թևերը պահել միևնույն դիրքով՝ թափահարել, քանի արագությունը չի հասել ժամում հիսուն մղոնի, իսկ հետո պահել միևնույն դիրքով:

Նա բարձրացավ երկու հազար ֆուտ, մի անգամ էլ փորձեց, խոյաթռչչի մեջ կտուցը ձգեց ներքև, տարածեց թեւերը, իսկ երբ հասավ ժամում հիսուն մղոն արագության, դադարեց թափահարել: Անհավատալի լարվեց, բայց հասավ նպատակին: Տասը վայրկյան նա անորսալի ստվերի նման սլանում էր ժամում հիսուն մղոն արագությամբ: Ջոնաթանը ճայերի համար արագընթաց թռչչի համաշխարհային ռեկորդ սահմանեց:

Բայց նա երկար չվայելեց հաղթանակի բերկրանքը: Հենց փորձեց դուրս գալ խոյաթռչչից, հենց փոքր-ինչ փոխեց թևերի դիրքը, նրան գիրկն առավ նախկին դաժան, անհաղթահարելի պտտահողմը, տարավ ժամում իննսուն մղոն արագությամբ ու դինամիտի պես սկսեց պատառոտել մարմինը: Ծովից մի փոքր բարձր Ջոնաթան ճայը չդիմացավ եւ տապալվեց քարի պես կոշտ ջրի մեջ:

Երբ խելքը գլուխը եկավ, արդեն գիշեր էր. նա լուսնի լույսի տակ սկսեց լողալ օվկիանոսի հարթության վրայով: Բզկտված փետուրները կապարով լցվեցին, բայց անհաջողության լուծն ավելի ծանր բեռան պես իջավ նրա թիկունքին: Աղոտ ցանկություն առաջացավ, որ այդ բեռն աննկատելիորեն իրեն ծովի հատակը տանի, և այնժամ, ի վերջո, ամեն ինչ կվերջանա:

Նա սկսեց սուզվել ջրի մեջ և հանկարծ ներսում, ինչ-որ տեղ անձանոթ, խուլ ձայն լսեց. «Ելք չունեմ: Ես ճայ եմ: Ես կարող եմ միայն այն, ինչ կարող եմ: Եթե ծնված լինեի թռիչքների մասին շատ բան գիտենալու համար, ապա գլխիս փոխարեն հաշվիչ մեքենա կլինեի: Եթե ծնված լինեի արագընթաց թռիչքների համար, ապա թևերս բազեի նման կարճ կլինեին ու մկներով կսնվեի, ոչ թե ձկներով: Հայրս իրավացի է: Խենթությունը մոռանալ է պետք: Ես պետք է վերադառնամ տուն, մեր Երամի մոտ եւ գոհ լինեմ, որ այնպիսին եմ, ինչպիսին կամ խեղճ, թույլ ճայ»:

Խուլ ձայնը մարեց, և Ջոնաթանը հնազանդվեց: «Գիշերով ճայի տեղը ափն է, և այսուհետև, - մտածեց նա,— ես ոչնչով չեմ տարբերվի մյուսներից: Այդպես բոլորիս համար էլ լավ կլինի»:

Հոգնած պոկվեց մութ ջրից եւ թռավ դեպի ափ՝ ուրախանալով, որ հասցրել է փոքր բարձրություն թռչել ուժերի նվազագույն վատնումով:

«Բայց ոչ,— մտածեց նա,— ես հրաժարվել եմ կյանքից, այն ամենից, ինչ սովորել եմ: Ես այնպիսի ճայ եմ, ինչպես բոլորը, և պարտավոր եմ թռչել, ինչպես բոլոր ճայերը»: Տանջալի դժվարությամբ նա հարյուր ֆուտ բարձրացավ և թևերը եռանդուն թափահարելով՝ տուն շտապեց:

Նա թեթևություն զգաց Երամի մյուս անդամների պես ապրելու որոշումից: Իմացության մարտակառքին գամող շղթաները փշրվեցին, չի լինի պայքար, չի լինի և պարտություն: Ինչ հաճելի է դադարել մտածել և խավարում թռչել դեպի առափնյա կրակները:

— Խավար՛ր,— հանկարծ հնչեց տազնապալի խուլ ձայնը,— **ՃԱՅԵՐԸ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ ԵՐԲԵՔ ՉԵՆ ԹՈՉՈՒՄ:**

Բայց Ջոնաթանը չցանկացավ լսել. «Ինչ հաճելի է,— մտածեց նա,— Լուսինը և փարոսի կրակների պես գիշերային ծովի մեջ խայտացող լույսի արտացոլանքը, չորսբոլորն այնպես խաղաղ ու հանգիստ է»:

— Իջի՛ր: Ճայերը խավարի մեջ երբեք չեն թռչում: Եթե գիշերում թռչելու համար ծնված լինեիր, բվի աչքեր կունենայիր, գլխի փոխարեն՝ հաշվիչ մեքենա: Բազեի կարճ թևեր պետք է ունենայիր:

Գիշերային խավարի մեջ, հարյուր ֆուտ բարձրության վրա Ջոնաթան Լիվինգսթոնը կկոցեց աչքերը: Նրա ցավի, նրա որոշման հետքն անգամ չմնաց:

Կարճ թևեր: **ԲԱՉԵԻ ԿԱՐՃ ԹԵՎԵՐ:**

Ահա թե որն է գաղտնիքը: «Ինչ հիմարն եմ ես: Եղած-չեղածը փոքրիկ, բոլորովին պատիկ թևն է: Եղած-չեղածը թևերը լրիվ ծալելն է և թռիչքի ժամանակ միայն դրանց ծայրերը շարժելը: **ԿԱՐՃ ԹԵՎԵՐ»:**

Ջրի սև զանգվածի վրա նա բարձրացավ երկու հազար ֆուտ, եւ առանց վայրկյան իսկ անհաջողության, մահվան մասին մտածելու, թևերի լայն մասերն ամուր սեղմեց իրանին,

քամուն հանձնեց միայն դաշույնի պես սուր ծայրերը՝ փետուր փետուրի ու նետվեց գահավեժ խոյաթռիչքի:

Քամին խլացուցիչ ոռնում էր գլխավերևում: Ժամում յոթանասուն մղոն, իննսուն, հարյուր քսան, ավելի արագ: Հիմա՝ ժամում հարյուր քառասուն մղոն արագության ժամանակ ուժերի նման լարում չէր զգում, ինչպես առաջ յոթանասունի դեպքում, թևերի ծայրի թեթևակի շարժումը բավական էր խոյաթռիչքից դուրս գալու համար, և նա հրանոթի արկի նման, լուսնի ցուքից գորշացած, սլացավ ալիքների վրայով:

Աչքերը կկոցեց, որպեսզի տեսողությունը պահպանի քամուց, և երջանկության զգացումը պատեց նրան: «Ժամում հարյուր քառասուն մղոն: Առանց կառավարումը կորցնելու: Եթե անցնեն խոյաթռիչքի ոչ թե երկու, այլ հինգ հազար ֆուտից, հետաքրքիր է, ինչպիսի արագությամբ...»:

Բարի մտադրությունները մոռացված են, սրընթաց, փոթորկոտ հողմով քշված-տարված: Բայց Ջոնաթանը խախտելով քիչ առաջ ինքն իրեն տված խոստումը՝ խղճի խայթ չէր զգում: Նման խոստումները կապանք են այն ճայերի համար, որոնց ճակատագիրը շարքային լինելն է: Նրանց համար, ովքեր ձգտում են գիտելիքների և արդեն մեկ անգամ հասել են կատարելության, նման բաները նշանակություն չունեն:

Լուսաբացին Ջոնաթանը վերսկսեց մարզումները: Հինգ հազար ֆուտ բարձրությունից ծովի կապույտ մակերևույթին ձկնորսանավերը տաշեղներ էին երևում, իսկ նախաճաշող Երամը՝ պարող փոշեհատիկներից գոյացած թեթև ամպ:

Նա եռանդով լի՝ երջանկությունից միայն թեթևակի դողում էր: Նա հպարտ էր, որ կարողացել էր հաղթահարել սարսափը: Առանց մտածելու՝ նա թևերի առջևի մասերը սեղմեց իրանին, ծայրերը՝ փոքրիկ անկյունները, հանձնեց քամուն և նետվեց ծովը:

Չորս հազար ֆուտ անցնելով՝ Ջոնաթանը հասավ առավելագույն արագության, քամին վերածվեց հնչյունների հոծ, թրթռացող պատի, որը թույլ չէր տալիս ավելի արագ շարժվել: Նա գահավեժ սավառնում էր ժամում երկու հարյուր տասնչորս մղոն արագությամբ: Նա հիանալի հասկանում էր՝ եթե նման արագության դեպքում թևերը բացվեն, ապա ինքը՝ ճայը, միլիոն կտոր կլինի: Բայց արագությունը հզորություն է, արագությունը երջանկություն է, արագությունը չխամրող գեղեցկություն է:

Հազար ֆուտ բարձրության վրա նա սկսեց դուրս գալ խոյաթռիչքից: Ոռնացող քամին թևերի ծայրերը ճմլել ու այլանդակել էր, առագաստանավն ու ճայերի երամը թեքվեցին և փակելով նրա ճանապարհը՝ ֆանտաստիկ արագությամբ սկսեցին խոշորանալ:

Նա կանգ առնել չգիտեր, նա նույնիսկ չգիտեր նման արագության դեպքում ինչպես շրջվել:

Բախումը վայրկենական մահ էր:

Նա փակեց աչքերը:

Եվ պատահեց այնպես, որ այդ առավոտ, արեւածագին Ջոնաթան Լիվինգսթոնը աչքերը փակ հասավ ժամում երկու հարյուր տասնչորս մղոն արագության ու քանու փետուրների խլացուցիչ սուլոցի ուղեկցությամբ մխրձվեց նախաճաշող Երամի ճիշտ կենտրոնը: Բայց Հաջողության ճայն այս անգամ ժպտաց նրան՝ ոչ ոք չգոհվեց:

Այն պահին, երբ Ջոնաթանը երկինք պարզեց կտուցը, դեռ սլանում էր ժամում հարյուր վաթսուն մղոն արագությամբ: Երբ նրան հաջողվեց արագությունը նվազեցնել մինչև ժամում քսան մղոնի և վերջապես կարողացավ տարածել թևերը, առագաստանավը գտնվում էր ետևում՝ չորս հազար ֆուտ հեռավորության վրա, և ծովի մակերևույթին փոքր էր երևում:

Նա հասկանում էր, որ դա հաղթանակ է: Առավելագույն հաջողություն: Ժամում երկու հարյուր քսանչորս մղոն՝ ճայի համար: Դա պոռթկում էր, անմոռանալի, անկրկնելի պահ Երամի պատմության մեջ և նոր դարաշրջանի սկիզբ՝ Ջոնաթանի կյանքում: Նա շարունակում էր իր միայնակ մարզումները: Ծալում էր թևերը և անցնում խոյաթռիչքի ութ հազար ֆուտ բարձրությունից շուտով սովորեց շրջադարձեր կատարել:

Նա հասկացավ, որ հսկայական արագության դեպքում բավական է մեկ դյույմի չափ թեքել թեկուզ մի փետուր, և արդեն լայն, սահուն շրջադարձ կստացվի: Սակայն ավելի վաղ հասկացավ, որ եթե նման արագության դեպքում թեքի թեկուզ երկու փետուր, ապա մարմինը կսկսի պտտվել հրացանից արծակած գնդակի նման և... Ջոնաթանն աշխարհում առաջին ճայն էր, որ սովորեց բարձրագույն սավառնորդության թռիչքաձևեր կատարել:

Այդ օրը նա ժամանակ չկորցրեց ուրիշ ճայերի հետ դատարկաբանելու համար, արևը վաղուց մայր էր մտել, իսկ նա դեռ թռչում էր ու թռչում: Նրան հաջողվեց մահվան օղակ կատարել, դանդաղեցված տակառ, բազմապարույր տակառ, շրջված խցանահան, հակադարձ իմելման, վիրած:

Արդեն խոր գիշեր էր, երբ նա թռավ դեպի ասի՝ Երամի մոտ: Նրա գլուխը պտույտ էր գալիս: Մահու չափ հոգնած էր: Բայց վայրէջքից առաջ ուրախությամբ մահվան օղակ կատարեց, իսկ հետո՝ նաև արագացրած տակառ: «Երբ նրանք լսեն այդ լուրը,— Պոռթկման մասին մտածեց նա,— երջանկությունից կխենթանան: Ինչքան լիարժեք կլինի կյանքն այժմ: Ափի և ձկնորսանավերի արանքում ծուլորեն թրև գալու փոխարեն իմանալ կյանքի իմաստը: Մենք վերջ կտանք տգիտությանը, մենք կդառնանք այնպիսի արարածներ, որոնց մատչելի կլինեն վարպետությունը եւ կատարելությունը: Մենք կդառնանք ազատ: Մենք կսովորենք թռչել»:

Ապագան ափեափ լեցուն էր և այնքան գրավիչ բան էր խոստանում: Երբ նա վայրէջք կատարեց, բոլոր ճայերը հավաքվել էին, որովհետև ուր որ է խորհուրդն սկսվելու էր. երևում է, վաղուց էին հավաքվել: Իրականում նրանք սպասում էին:

— Ջոնաթան Լիվինգսթոն, դուրս արի կենտրոն:

Տոհմավագի բառերը հանդիսավոր էին հնչում: Կենտրոն դուրս գալու հրավերը կամ մեծագույն անարգանք, կամ մեծագույն պատիվ էր նշանակում: Պատվի շրջանը երախտագիտության տուրք է, որ ճայերը մատուցում են իրենց մեծ առաջնորդներին:

«Դե իհարկե,— մտածեց նա,— առավոտ էր, Երամը նախաճաշում էր և նրանք ականատես եղան Պոռթկումին: Բայց ինձ մեծարանք պետք չէ: Ես չեմ ուզում առաջնորդ լինել: Ես միայն ցանկանում եմ նրանց հետ կիսել այն, ինչ սովորել եմ, նրանց ցույց տալ, թե ինչպիսի հեռուներ են բացվում մեր առջև»: Եվ քայլ արեց առաջ:

— Ջոնաթան Լիվինգսթոն, - ասաց Տոհմավազը,— դուրս արի կենտրոն: Դու ցեղակիցներիդ առջև քեզ Անարգանքով պսակեցիր:

Նրան կարծես փայտով հարվածեցին: Ծնկները թուլացան, փետուրները կախ ընկան, ականջներն սկսեցին զրնգալ: Անարգանքի՞ շրջան: Չի կարող պատահել: Պոռթկո՞ւմ: Նրանք չեն հասկացել: Նրանք սխալվե՞լ են, նրանք սխալվել են:

—...Քո թեթևամտությամբ և անպատասխանատու վարքով,— հանդիսավոր ծորում էին բառերը,- ճայերի ընտանիքի սովորույթները և արժանապատվությունը ոտնահարելու համար...

Անարգանքի շրջանը նշանակում է վտարում Երամից, նրան կդատապարտեն մենության՝ Հեռավոր ժայռերում:

—...Կգա օրը, Ջոնաթան Լիվինգսթոն, կհասկանաս, որ թեթևամտությունը չի կարող կերակրել: Կյանքի իմաստը հասկանալ մեզ չի տրված, քանզի այն անիմանալի է, մեզ մի բան է հայտնի, մենք նետված ենք այս աշխարհ, որպեսզի ուտենք և ողջ մնանք այնքան ժամանակ, քանի դեռ մեր ուժերը կբավականացնեն:

Ճայերը երբեք չեն հակաճառում Երամի Խորհրդին, բայց Ջոնաթանի ձայնը խախտեց լռությունը:

— Թեթևամտություն: Եղբայրներ՝,— բացականչեց նա: - Ո՞վ է ավելի մտածում Երամի մասին, քան ճայը, որը բացահայտում է կյանքի գերագույն իմաստը, նշանակությունը և երբեք չի մոռանում դա: Հազար տարի է՝ մենք թափառում ենք ձկան գլուխ փնտրելով, բայց հիմա վերջապես հայտնի է ինչու ենք ապրում՝ որպեսզի ճանաչենք, հայտնագործենք նորը, ազատ լինենք: Ինձ հնարավորություն տվեք, թույլ տվեք ցուցադրեմ, ինչ սովորել եմ...

— Դու այլևս մեր եղբայրը չես,— խմբովի երգածայն ասացին ճայերը, թևերի փառահեղ շարժումով փակեցին ականջները և թիկունքները դարձրին նրան:

Ջոնաթանն իր օրերի մնացորդն անցկացրեց մենակ, սակայն Հեռավոր

ժայռերից բազմաթիվ մղոններ հեռու էր թռչում: Եվ միայնությունը չէր, որ տանջում էր նրան, այլ՝ որ ճայերը չցանկացան հավատալ թռիչքի երջանկությանը, չուզեցին բացել աչքերը և տեսնել:

Ամեն օր նա մի նոր բան էր սովորում: Իմացավ, որ մարմնին շրջիտելի ձև տալով կարելի է արագընթաց խոյաթռիչքով սուզվել և օվկիանոսում տասը ֆուտ խորությամբ լողացող հազվագյուտ ու համեղ ձուկ որսալ: Նա այլևս ձկնորսանավերի և հացի փշրանքների կարիք

չէր զգում: Նա սովորեց օդում քնել, սովորեց, երբ քամին փչում էր ափից, գիշերով ուղուց չչեղվել, կարող էր հարյուրավոր մղոններ թռչել՝ արևածագից մինչև արևամուտ: Նույն ինքնատիրապետումով նա թանձր ծովային մշուշի միջով սլանում էր դեպի ջինջ, շլացուցիչ փայլով շողշողացող երկինք այն ժամանակ, երբ մյուս ճայերը սեղմվում էին գետնին՝ չմտածելով, որ մշուշից ու անձրևից բացի ուրիշ բան կա աշխարհում: Նա սովորեց ուժեղ քամու հետ թռչել մինչև մայրցամաքի խորքերը և այնտեղ ճաշի համար համեղ միջատներ որսալ:

Նա երջանիկ էր միայն այն հույսով, որ երբևէ սովորածը կիսելու է Երամի հետ: Նա սովորեց թռչել և չէր ափսոսում այն գինը, որ վճարել էր դրա համար: Ջոնաթանը հասկացավ, թե ինչու է այդքան կարճ ճայերի կյանքը, նրանց կրծում է ձանձրույթը, վախը, չարությունը, բայց նա մոռացավ ձանձրույթը, վախը, չարությունը և երկար ու երջանիկ կյանքով ապրեց:

Իսկ հետո, մի անգամ երեկոյան, երբ Ջոնաթանը հանգիստ ու միայնակ ճախրում էր այնքան սիրելի երկնքում, մոտեցան նրանք: Երկու սպիտակ ճայերը, որ հայտնվեցին նրա թևերի մոտ, շողում էին աստղերի պես և մթին երկինքը լուսավորում փափուկ, շոյող լույսով: Բայց ավելի զարմանալի էր նրանց վարպետությունը, նրանք թռչում էին՝ անփոփոխ պահպանելով իրենց ու Ջոնաթանի թևերի միջև եղած ճիշտ մեկ դյույմ տարածությունը:

Առանց մի բառ ասելու Ջոնաթանը նրանց փորձության ենթարկեց, որին երբեք ոչ մի ճայ չէր կարող դիմանալ: Նա թևերի դիրքը փոխեց այնպես, որ արագությունը կտրուկ նվազեց, ևս մի փոքր և անկումն անխուսափելի էր: Շողացող երկու թռչունները տարածությունը չխախտելով՝ միաժամանակ սահուն նվազեցրին արագությունը: Նրանք կարողանում էին դանդաղ թռչել:

Նա ծալեց թևերը, կողքից կողք օրորվեց և ժամում հարյուր իննսուն մղոն արագությամբ նետվեց խոյահար թռիչքի: Ճայերը սլացան նրա հետ միասին՝ անբասիր պահպանելով շարքը:

Վերջապես Ջոնաթանը նայն արագությամբ կատարեց երկար, ուղղահայաց, դանդաղեցված տակառ: Նրանք ժպտացին և տակառը կատարեցին նրա հետ միաժամանակ:

Նա անցավ հորիզոնական թռիչքի, միաժամանակ լուռ սավառնեց, իսկ հետո հարցրեց.

- Հիանալի է: Ո՞վ եք դուք:

— Մենք քո Երամից ենք, Ջոնաթան, մենք քո եղբայրներն ենք: - Նրանք խոսում էին հանգիստ ու վստահ: - Մենք եկել ենք, որպեսզի քեզ կանչենք վեր, տուն տանենք:

— Ես տուն չունեմ: Երամ չունեմ: Ես Աքսորյալ եմ: Մենք այժմ թռչում ենք դեպի Հողմերի Մեծ լեռան կատարը: Եվ իմ լիկած մարմինը կարող եմ ևս մի քանի հարյուր ֆուտ բարձրացնել, բայց ավելի վեր՝ ոչ:

— Դու կարող ես ավելի վեր բարձրանալ, Ջոնաթան, որովհետև դու սովորել ես: Դու ավարտեցիր մի դպրոց, այժմ ժամանակն է ընդունվել մեկ ուրիշը:

Ջոնաթանը իր ամբողջ կյանքն ապրել էր այդ մտքով, և Ջոնաթանը հասկացավ, հասկացավ ակնթարթորեն: Նրանք ճիշտ են: Նա կարող է ավելի վեր թռչել, և ժամանակն է տուն վերադառնալ: Նա մի վերջին երկար հայացք ձգեց երկնքին, այդ հոյակապ արծաթյա երկրին, ուր այնքան շատ բան էր սովորել:

— Ես պատրաստ եմ,— վերջապես ասաց նա:

Եվ Ջոնաթան Լիվինգսթոնը վեր խոյացավ աստղերի պես շողշողուն երկու ճայերի հետ, և չքացավ երկնքի անթափանցելի խավարում:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

---

«Նշանակում է, սա՞ է երկինքը, որ կա»,— մտածեց նա և չկարողացավ ժպիտը զսպել: Հավանաբար, այնքան էլ հարգալից չէ դեռ չմտած՝ դատողություններ անել, թե ինչ է երկինքը:

Այժմ, երբ հրաժեշտ տվեց երկրին և երկու շողշողուն ճայերի հետ թև թևի բարձրացավ ամպերից վեր, նկատեց, որ իր մարմինն էլ աստիճանաբար դառնում է նրանց պես ճաճանչավետ: Իհարկե, նույն ջահել Ջոնաթանի իրանն էր, բայց ոսկեգույն աչքերի առջև ինքն արտաքննապես փոխվում էր:

Ճայի մարմինն էլ մնաց, բայց և այնպես Ջոնաթանը երբեք այդքան լավ չէր կարողացել թռչել: «Տարօրինակ է,— մտածում էր նա,— ես երկու անգամ քիչ եռանդ եմ թափում, իսկ թռչում եմ կրկնակի արագ, ես ինձ կրկնակի ուժեղ եմ զգում, քան երկրի վրա լավագույն օրերիս»:

Նրա «սպիտակ փետուրները փայլում ու շողարձակում էին իսկ թևերը դարձել էին անթերի ողորկ, ինչպես փայլեցրած արծաթյա թիթեղներ: Նա սկսեց ուսումնասիրել դրանք և մկանների ուժը փորձեց նոր թևի վրա:

Ժամում երկու հարյուր հիսուն մղոն արագության ժամանակ նա զգաց որ մոտենում է հորիզոնական թռիչքի առավելագույն սահմանին: Ժամում երկու հարյուր յոթանասուներեք մղոնի ժամանակ հասկացավ որ ավելի արագ թռչելու ուժ չունի և փոքրիկ հիասթափություն ապրեց: Նրա նոր մարմնի հնարավորությունները նույնպես սահմանափակ էին, ճիշտ է, հաջողվեց զգալիորեն գերազանցել իր նախկին անձնական ռեկորդը, բայց սահման այնուամենայնիվ գոյություն ուներ և դա հաղթահարելու համար հսկայական ջանքեր կպահանջվեին: «Երկնքում,— մտածեց նա,— ոչ մի սահման գոյություն չպետք է ունենա»:

Ամպերը տեղի տվեցին, նրա ուղեկցորդները բացականչեցին.

— Երջանիկ վայրէջք, Ջոնաթան,— և անհետացան թափանցիկ օդում:



Ծովի վրայով նա թռչում էր դեպի կտրտված, լեռնոտ ափը: Ժայռերի մոտ հինգ-վեց ճայ թռիչքի տարրեր էին մշակում: Հեռու հյուսիսում, հորիզոնի մոտ, թռչում էին ևս մի քանի ճայ: Նոր հեռուներ, նոր մտքեր, նոր հարցեր: «Ինչո՞ւ այսքան քիչ ճայ կա: Երկնքում պետք է որ ճայերի շատ ու շատ երամներ լինեն: Իսկ ինչո՞ւ հանկարծ հոգնեցի: Երկնքում, թվում է, ճայերը երբեք չպետք է հոգնեն և չպետք է քնեն»:

Որտե՞ղ էր լսել այդ մասին: Երկրային կյանքի իրադարձություններն ավելի ու ավելի հեռու էին մղվում: Երկրի վրա նա շատ բան էր սովորել, ճիշտ է, բայց մանրամասները դժվարությամբ է հիշում, կարծես թե ճայերը կռվում էին կերի համար, և ինքն Աքսորյալ էր:

Երբ մոտեցավ ափին, մեկ տասնյակ ճայեր թռան ընդամաջ, բայց նրանցից ոչ մեկը ոչ մի բան չփոխանակեց: Ջոնաթանը զգաց, որ նրանք ուրախ են, որ ինքն այստեղ է՝ տանը: Այդ օրը շատ երկար էր, այնքան երկար, որ ինքը մոռացել էր, թե երբ է ծագել արևը:

Նա շրջադարձ արեց վայրէջքի համար, թևերը թափահարեց, մեկ դյույմ բարձրության վրա անշարժացավ և փափուկ իջավ ավազի վրա: Մյուս ճայերը նույնպես նստեցին, բայց դրա համար բավական եղավ միայն թեթևակի շարժել փետուրները: Նրանք տարածեցին իրենց ձյունաթույր թևերը, քամու հետ օրորվեցին և փետուրների դիրքը փոխելով՝ կանգ առան հենց այն պահին, երբ որ թաթերը դիպան ափին: Հիանալի վայրէջք էր, բայց կրկնելու համար Ջոնաթանը շատ էր հոգնած: Նա դեռ ոչ մի բան չէր արտասանել և կանգնած քնեց ավազի վրա:

Առաջին իսկ օրերին Ջոնաթանը հասկացավ, որ այստեղ թռիչքի մասին ավելի շատ բան ունի սովորելու, քան իր ողջ կյանքի ընթացքում: Բայց և այնպես՝ տարբերություն կար: Այստեղ ճայ-համախոհներ էին ապրում: Նրանցից յուրաքանչյուրը կյանքի նպատակը համարում էր թռիչքի գաղտնիքների մեջ թափանցելը, ձգտում էր թռիչքի կատարելության, որովհետև թռչել նրանք սիրում էին աշխարհում ամեն ինչից առավել: Դրանք զարմանալի թռչուններ էին, բոլորն՝ առանց բացառության, և նրանք օրավուր, ժամ առ ժամ կատարելագործում էին օդում շարժվելու տեխնիկան և փորձում սավառնելու նոր ձևեր:

Ջոնաթանը կարծես թե մոռացել էր այն աշխարհի մասին, որտեղից եկել էր, այն ափի մասին, որտեղ ապրում էր Երամը, որը չգիտեր ինչ է թռիչքի երջանկությունը և թևերից օգտվում էր միայն կեր հայթայթելու, կերի կռիվ տալու համար: Բայց երբեմն հանկարծակի հիշում էր:

Մի անգամ առավոտյան, երբ իր դաստիարակի հետ միասին ծալած թևերով մի քանի արագընթաց տակառ կատարելուց հետո ափին հանգստանում էր, հիշեց հարազատ վայրերը:

— Սալիվան, իսկ ո՞ւր են մյուսները,— հարցրեց նա անձայն, որովհետև լիովին տիրապետել էր տեղացի ճայերի՝ տարածության վրա հաղորդակցվելու ոչ բարդ ձևերին, նրանք ոչ ճչում էին, ոչ էլ հայհոյում:

— Ինչո՞ւ այստեղ մենք քիչ ենք: Գիտե՞ս, այնտեղ, որտեղից եկել եմ, ապրում էին...

—...Հարյուր հազարավոր ճայեր: Գիտեմ, - Սալիվանը գլխով արեց,— Ջո— նաթան, միտքս միայն մի պատասխան է գալիս: Քեզ նման թռչունները հազվագյուտ բացառություն են: Մեզնից շատերն այնքան դանդաղ են առաջ շարժվում: Մենք մի աշխարհից տեղափոխվում ենք նախորդին շատ նման մեկ ուրիշ աշխարհ և անմիջապես մոռանում, թե որտեղից ենք եկել: Մեզ համար միևնույն է, թե ուր ենք գնում, կարևորն այն է, ինչ կատարվում է այս վայրկյանին: Պատկերացնո՞ւմ ես քանի-քանի կյանք պիտի ապրել մինչև կհայտնվի աղոտ մի ենթադրություն, որ կյանքը չի սահմանափակվում կերով, պայքարով և Երամին իշխելով: Հազարավոր կյանքեր, Ջո՛ն, տասը հազար: Իսկ հետո ևս հարյուր կյանք՝ մինչև կսկսենք հասկանալ, որ գոյություն ունի կատարելություն կոչվածը, և էլի հարյուրը՝ մինչև կհամոզվենք, որ կյանքի իմաստը կատարելության հասնելը և մյուսներին դրա մասին պատմելն է: Նույն օրենքը, հասկանալի է, գործում է և այստեղ: Հաջորդ աշխարհը մենք սովորում ենք մեր սովորածին համապատասխան: Եթե ոչինչ չենք սովորել, հաջորդ աշխարհը կթվա այնպիսին, ինչպիսին սա է, և ստիպված կլինենք հաղթահարել նույն արգելքները՝ թաթերից կախված նույն կապարե գնդերով:

Նա տարածեց թևերը և դեմքով շրջվեց դեպի քամին:

— Բայց դու, Ջոն, այնքան շատ բան ես սովորել և այնքան արագ,— շարունակեց նա,— որ հարկ չունեցար այստեղ ընկնելու համար հազարավոր կյանքեր ապրել:

Եվ ահա նրանք կրկին օդ բարձրացան, վերսկսեցին մարզումները: Երկուսով տակառ կատարելը դժվար էր, քանի որ շուռ եկած դիրքով թաթերը վեր պարզած թռչելիս Ջոնաթանը պետք է գլխի ընկներ, թե շրջադարձի վերջին փուլում ինչպես կորացնի թևերը, որպեսզի իր շարժումներն անթերի համընկնեն ուսուցչի շարժումներին:

— Մեկ անգամ էլ փորձենք,— նորից ու նորից կրկնում էր Սալիվանը: - Մեկ անգամ էլ փորձենք: - Եվ վերջապես: - Լավ է:

Հետո նրանք սկսեցին մշակել արտաքին օդակը:

Մի անգամ երեկոյան ճայերը, որոնք չէին գնացել գիշերային թռիչքի, միասին կանգնել էին ավազի վրա, նրանք մտածում էին: Ջոնաթանը սիրտ արեց մոտենալ Տոհմավագին՝ Ճայ, որն, ինչպես ասում էին, պատրաստվում էր շուտով հրաժեշտ տալ այս աշխարհին:

— Չիա՛նգ...,— փոքր-ինչ հուզվելով սկսեց նա:

Ծեր ճայը քնքուշ նայեց նրան:

— Ի՞նչ է , որդիս:

Տարիների ընթացքում Տոհմավագը ոչ միայն չէր թուլացել, այլ ընդհակառակը, դարձել էր ավելի ուժեղ, նա թռչում էր Երամի բոլոր ճայերից արագ և կատարելապես սիրապետում էր այնպիսի թռիչքածների, որ մնացածները դեռ նոր էին յուրացնում:

— Չիա՛նգ, այս աշխարհը... ամենևին էլ երկինքը չէ, ճի՞շտ է:

Լուսնի լույսի տակ երևաց, որ Տոհմավագը ժպտաց:

— Ջոնաթա՛ն, դու նորից սովորում ես,— ասաց նա:

— Այո: Իսկ ի՞նչ է մեզ սպասում առջևում: Ո՞ր ենք գնում: Մի՞ թե այնպիսի տեղ չկա, որ երկինք է կոչվում:

— Ոչ, Ջոնաթա՛ն, նման տեղ չկա: Երկինքը տեղ չէ և ոչ էլ ժամանակ: Երկինքը կատարելության հասնելն է: - Նա լռեց: - Դու, կարծես, շատ արագ ես թռչում:

Ես... Ես արագություն շատ եմ սիրում,— ասաց Ջոնաթանը: - Նա զարմացած էր ու հպարտ, որ Տոհմավագը նկատել էր իրեն:

— Ջոնաթա՛ն, դու մոտենում ես երկնքին, երբ մոտենում ես բացարձակ արագությանը: Դա չի նշանակում որ պետք է թռչես ժամում հազար կամ միլիոն արագությամբ, կամ թե սովորես թռչել լույսի արագությամբ: Որովհետև յուրաքանչյուր թիվ սահման է, իսկ կատարելությունը սահմաններ չունի: Բացարձակ արագության հասնելը, որդի՛ս, նշանակում է հայտնվել այնտեղ:

Հանկարծ Չիանգը չքացավ և անմիջապես հայտնվեց Ջոնաթանից հիսուն մղոն հեռու, ջրի եզրին: Հետո կրկին անհետացավ և վայրկյանի մեկ հազարերորդականից հետո արդեն կանգնած էր նրա կողքին:

— Սա պարզապես կատակ էր,— ասաց նա:

Ջոնաթանը զարմանքից չէր կարողանում ուշքի գալ: Նա մոռացավ երկինքը:

— Ինչպե՞ս է հաջողվում: Դու ի՞նչ ես զգում, երբ թռչում ես: Ինչպիսի՞ տարածություն կարող ես անցնել:

— Ուզածդ տարածությունը ուզածդ պահին կարելի է թռչել, մնում է միայն ցանկանալ,— ասաց Տոհմավագը: - Ես եղել եմ ամենուր և ամեն տեղ, ուր թափանցել է միտքս,— նա նայում էր ծովի հարթությանը: - Տարօրինակ է, ճայերը, որոնք հանուն ճանապարհորդության մերժում են կատարելությունը, ոչ մի տեղ չեն թռչում, ո՞ր կարող են հասնել այդ մլուլ տվողները: Իսկ նրանք, ովքեր հրաժարվում են ճանապարհորդելուց, հանում կատարելության, երկնաքարերի նման սավառնում են տիեզերքով մեկ: Հիշի՛ր, Ջոնաթա՛ն, երկինքը որոշակի տեղ կամ ժամանակ չէ, որովհետև ոչ տեղը, ո՛չ ժամանակը իմաստ չունեն: Երկինքը...

— Դու կարո՞ղ ես ինձ սովորեցնել այդպես թռչել:

Անհայտության դեմ ևս մեկ հաղթանակի ակնկալությունից Ջոնաթանը դողում էր:

— Իհարկե, եթե դու ցանկանում ես սովորել:

— Ցանկանում եմ: Ե՞րբ կսկսենք:

— Կարելի է՝ հիմա, եթե չես առարկում:

— Ես ուզում եմ քեզ նման թռչել, - ասաց Ջոնաթանը, և նրա աչքերը տարօրինակ բոցով բռնկվեցին: - Ասա, ի՞նչ եմ անելու:

Չիանգը խոսում էր դանդաղ՝ խորաթափանց նայելով իր ջահել աշակերտին:

— Մտքի արագությամբ, այլ կերպ ասած՝ ցանկացածդ տեղը թռչելու համար,— սկսեց նա,— նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, որ արդեն հասել ես...

Չիանգի խոսքերից ելնելով՝ գործի էությունն այն էր, որ Ջոնաթանը պետք է հրաժարվեր պատկերացնել, թե ինքը քառասուներկու դույն թևերի բացվածք ունեցող մարմնի գերին է և սահմանափակված է կանխապես ծրագրավորված հնարավորությունների քանակով: Էությունն այն էր, որպեսզի գիտակցեր՝ ճայի իսկական «եսը» չգրված թվի նման կատարյալ է և միաժամանակ գոյություն ունի ժամանակի ցանկացած պահին, տարածության ցանկացած կետում:

Ջոնաթանը մարզվում էր հմտորեն, անողոքաբար, օրավուր, արևածագից մինչև կեսգիշեր: Եվ չնայած բոլոր ջանքերին, չկարողացավ նույնիսկ մի փետուրի չափ առաջ շարժվել:

— Մոռացիր հավատի մասին,— պնդում էր Չիանգը: - Արդյո՞ք քեզ պետք եղավ հավատը թռչել սովորելու համար: Դու պետք է հասկանաս, թե ինչ է թռիչքը: Փորձիր մի անգամ ևս:

Իսկ հետո, մի անգամ, երբ Ջոնաթանը փակ աչքերով կանգնած էր ափին և ձգտում էր կենտրոնանալ, հանկարծ հասկացավ՝ ինչ էր ասում Չիանգը:

«Իհարկե, Չիանգն իրավացի է: Ես ստեղծված եմ կատարյալ, իմ հնարավորությունները անսահմանափակ են: Ես ճայ եմ»: Երջանկության հզոր ալիքը պատեց նրան:

— Լավ է,— ասաց Չիանգը, և նրա ձայնը հանդիսավոր հնչեց:

Ջոնաթանը բացեց աքերը: Նրանք մենակ էին՝ ինքը և Տոհմավազը, միանգամայն անծանոթ ծովափին, այստեղ ծառերն աճում էին մինչև ջրի պռունկը, գլխավերևում կախված էին դեղին երկվորյակներ՝ երկու արևներ:

— Վերջապես հասկացար,— ասեց Չիանգը,— բայց կառավարման վրա պետք է աշխատես:

— Որտե՞ղ ենք մենք:

Անսովոր բնանկարը Տոհմավազի վրա ոչ մի ազդեցություն չթողեց, ինչպես և Ջոնաթանի հարցը:

— Հավանաբար կանաչ երկնականարով և արեգակի փոխարեն երկու աստղերով ինչ-որ մոլորակի վրա:

Ջոնաթանը երջանիկ մարտակոչ արծակեց՝ առաջին ծայրը այն պահից, ինչ թողել էր Երկիրը:

— ՀԱՋՈՂՎՈՒՄ Է:

— Իհարկե, Ջոն, իհարկե հաջողվում է,— ասաց Չիանգը,— երբ գիտես ինչ ես անում, միշտ հաջողվում է: Իսկ այժմ կառավարման մասին...

Նրանք վերադարձան արդեն խավարի մեջ: Ճայերը չէին կարողանում հայացքները կտրել Ջոնաթանից, նրանց ոսկեգույն աչքերում քարացել էր սարսափը: Նրանք տեսել էին Ջոնաթանի՝ բացարձակ անշարժությունից հանկարծակի անհետանալը:

Բայց Ջոնաթանը շուտով ընդհատեց նրանց շնորհավորանքները.

— Ես այստեղ նորեկ եմ: Նոր միայն սկսում եմ: Այդ ես պետք է ձեզնից սովորեմ:

— Տարօրինակ է, Ջոն,— ասաց նրա կողքին կանգնած Սալիվանը,— տասը հազար տարվա ընթացքում չեմ տեսել ճայի, որը նման հաջողությամբ սովորի, ինչպես դու:

Երանը լուռ էր: Ջոնաթանը շփոթմունքից մի թաթից մյուսի վրա էր հենվում:

— Եթե ուզում ես, կսկսենք աշխատել ժամանակի վրա,— խոսեց Չիանգը,— և դու կսովորես թռչել դեպի անցյալն ու դեպի ապագան: Այնժամ պատրաստ կլինես ձեռնամուխ լինելու ամենադժվարին, ամենահանդուգն, ամենահետաքրքիր քայլին: Դու կնախապատրաստվես ուղղահայաց թռչելուն և կհասկանաս՝ ինչ է բարին և սերը:

Անցավ մեկ կամ մոտ մեկ ամիս: Ջոնաթանը անհավատալի նվաճումների հասավ: Նա միշտ էլ արագ էր առաջ շարժվում նույնիսկ սովորական մարզումների ժամանակ, բայց հիմա իր՝ Տոհմավազի ղեկավարությամբ նորն ընկալում էր շրջիտսելի, փետուրներով ծածկված հաշվիչ մեքենայի նման:

Իսկ հետո հասավ այն օրը, երբ Չիանգն անհետացավ: Նա հանգիստ գրուցում էր ճայերի հետ, համոզում մշտապես սովորել ու մարզվել և ձգտել հնարավորինս խորն ըմբռնել հավերժական կյանքի անտեսանելի, համապարփակ հիմքը: Նա խոսում էր, իսկ փետուրները դառնում էին ավելի ու ավելի պայծառ և վերջապես այնպես փայլատակեցին, որ ոչ մի ճայ չկարողացավ նրան նայել:

— Ջոնաթա՛ն,— ասաց, և դրանք նրա վերջին բառերն էին,— աշխատիր հասկանալ, թե ինչ է սերը:

Երբ ճայերի տեսողությունը վերականգնվեց, Չիանգն այլևս նրանց հետ չէր:

Օրերն անցնում էին մեկը մյուսի հետևից: Ջոնաթանը նկատեց, որ ավելի հաճախ է մտածում Երկրի մասին, որտեղից հեռացել էր: Եթե այնտեղ գիտենար այս ամենի մեկ

տասներորդական, մեկ հարյուրերորդական մասը, ինչ սովորեց այստեղ, ինչքան լիարժեք կլինեի նրա կյանքը: Նա կանգնել էր ավագի վրա ու մտածում էր. գուցե այնտեղ՝ Երկրի վրա գոյություն ունի մի ճայ, որը ցանկանում է դուրս պրծնել իր էության շղթաներից, ձգտում է հասկանալ, թե ինչ կարող են անել թևերը բացի մինչև ամառաստանավ թռչելուց ու հացի փշրանք փախցնելուց: Գուցե նույնիսկ համարձակություն է ունեցել այդ մասին բարձրաձայն ասել, և Երանը դատապարտել է նրան Աքսորի: Եվ ինչքան Ջոնաթանը շատ էր մարզվում բարու արտահայտությունը յուրացնելու համար, ինչքան շատ էր աշխատում սիրո բնույթն ըմբռնելու համար, այնքան ուժգին էր ցանկանում վերադառնալ Երկիր: Որովհետև, չնայած իր միայնակ անցյալին, Ջոնաթանը բնածին դաստիարակ էր, և նրա սերը նախ և ամառ արտահայտվում էր իր հայտնաբերած ճշմարտությունը յուրաքանչյուր ճայի հետ կիսելու ձգտումով, եթե միայն նա սպասում է ճշմարտությունը որոնելու համար սլանալու բարեհաջող առիթի:

Սալիվանը, որն այդ ընթացքում լիովին յուրացրել էր մտքի արագությամբ թռչելը և արդեն օգնում էր մյուսներին, Ջոնաթանի մտահղացումներին հավանություն չէր տալիս:

— Ջոն, մի ժամանակ քեզ դատապարտել են Աքսորի: Ինչու՞ ես կարծում, որ այդ նույն ճայերը այժմ կցանկանան քեզ լսել: Դու գիտես առածը և գիտես, որ այն իրավացի է՝ ճայը որքան բարձր է թռչում, այնքան հեռուն է տեսնում: Ճայերը, որոնցից դու հեռացել ես, կանգնած են գետնին, նրանք ճչում են, կռվում միմյանց հետ: Նրանք ապրում են երկնքից հազարավոր մղոններ այն կողմ, իսկ դու ասում ես, որ ցանկանում ես այնտեղից՝ Երկրի վրայից նրանց ցույց տալ երկինքը: Ախր, Ջոն, նրանք իրենց հայացքով չեն կարող նույնիսկ իրենց թևերի ծայրերն ընդգրկել: Մնա այստեղ: Օգնիր նոր ճայերին, օգնիր նրանց, ովքեր արդեն բավական բարձր են թռել՝ տեսնելու համար այն, ինչ պատրասվում ես նրանց պատմել: - Նա փոքր-ինչ լռեց, ապա ավելացրեց, — Ի՞նչ կլինեի, Չիանգը վերադառնար իր հին աշխարհը: Այսօր որտե՞ղ կգտնվեիր ինքդ:

Վերջին փաստարկն ամենահամոզիչն էր, իհարկե, եթե Սալիվանն իրավացի է: Ճայը որքան բարձր է թռչում, այնքան հեռուն է տեսնում:

Ջոնաթանը մնաց և սկսեց պարապել երկինք եկած նոր թռչունների հետ: Նրանք բոլորն էլ շատ ընդունակ էին և արագ յուրացնում էին այն, ինչ բացատրում էին: Բայց նախկին անհանգստությունը վերադարձավ, նա չէր կարողանում թոթափել այն միտքը, որ հավանաբար Երկրի վրա ապրում են մեկ-երկու ճայ, որոնք նույնպես կարող էին սովորել: Ինչքան շատ բան կիմանար այժմ, եթե այն օրերին, երբ ինքն Աքսորյալ էր, Չիանգի կողքին լիներ:

— Սալի, ես անտք է վերադառնամ, — ի վերջո ասաց նա: - Դու հիանալի աշակերտներ ունես: Նրանք քեզ կօգնեն նորեկներից գլուխ հանել:

Սալիվանը հոգոց արձակեց, բայց չառարկեց:

— Վախենում եմ, Ջոնաթան, որ կկարոտեմ քեզ, — ահա ամենը, ինչ ասաց նա:

— Սալի, ինչպե՞ս չես ամաչում,— կշտամբանքով բացականչեց Ջոնաթանը,— մի՞թե կարելի է նման հիմար բաներ ասել: Ամեն օր ինչո՞վ ենք զբաղված մենք: Եթե մեր բարեկամությունը կախված է միայն պայմանականություններից, ինչպիսին տարածությունն ու ժամանակն են, նշանակում է մենք ինքներս խորտակում ենք մեր եղբայրությունը, այն պահին, երբ հնարավորություն ունենք հաղթահարել ժամանակն ու տարածությունը: Բայց հաղթահարելով տարածությունը՝ միակ բանը, ինչից հեռանում ենք՝ Այստեղն է: Իսկ հաղթահարելով ժամանակը՝ մենք հեռանում ենք միայն Այժմ: Մի՞թե կարծում ես, որ մենք չենք կարող մեկ-երկու անգամ ինչ-որ տեղ հանդիպել այն միջանկյալ հատվածում, որ կոչվում է Այստեղ և Այժմ:

Սալիվանն ակամա ծիծաղեց:

— Դու լրիվ ցնդել ես,— քնքշորեն ասաց նա: - Եթե կա մեկը, որ կարող է Երկրի վրա ապրող որևէ կենդանի արարածի ցույց տալ, թե ինչպես կարելի է մի հայացքով ընդգրկել հազար մղոն տարածություն, ապա դա Ջոնաթան Լիվինգսթոնն է,— նա նայում էր ավազին: - Ցտեսություն, Ջոն, ցտեսություն, բարեկամս:

— Ցտեսություն, Սալի, մենք դեռ կհանդիպենք:

Այս բառերն արտասանելիս Ջոնաթանը ներքուստ մի այլ ժամանակի ավերին տեսավ ճայերի հսկայական երամներ և սովորական թեթևությամբ զգաց, որ ինքը, ո՛չ, փետուր ու ոսկոր չէ, ինքը ազատության թռիչքի գաղափարի կատարյալ մարմնացումն է, նրա հնարավորություններն անսահմանափակ են: Ֆլետչերը Լինզը դեռ շատ ջահել ճայ էր, բայց արդեն գիտեր, որ աշխարհում չկա այնպիսի թռչուն, որին Երանը նման դաժան վերաբերմունքի և անարդարացիության արժանացրած լիներ:

«Ինձ համար միևնույն է, թե ինչ կասեն նրանք,— մտածում էր նա թռչելով դեպի Հեռավոր ժայռերը, զայրույթից եռ էր գալիս, աչքերը մթնել էին,— թռչել՝ ամենևին էլ չի նշանակում թևերը թափ տալ մի տեղից մյուսը փոխադրվելու համար: Դա կարող է նույնիսկ... նույնիսկ մոծակը: Ինչ-որ մի հատիկ մահվան օղակ Տոհմավազ ճայի շուրջը, հենց այնպես կատակի համար, և ես Աքսորյալ եմ: Ի՞նչ է, նրանք կո՞ւյր են: Մի՞թե չեն տեսնում: Մի՞թե չեն հասկանում ինչպիսի փառքի կհասնենք, եթե սովորենք իսկապես թռչել:

Ինձ համար միևնույն է, թե ինչ են մտածում իմ մասին: Ես նրանց ցույց կտամ՝ ինչ է նշանակում թռչել: Որ ուզում են, թող մենակ, Աքսորյալ լինեմ: Բայց նրանք դեռ կզղջան դրա համար, այն էլ ինչպե՞ս կզղջան...»

Հանկարծ նա մի ձայն լսեց, թեև ձայնը շատ ցածր էր, բայց Ֆլետչերն այնպես վախեցավ, որ ցնցվեց օդում և անշարժացավ.

- Մի բարկանա նրանց վրա, Ֆլետչեր: Քեզ վտարելով՝ նրանք միայն իրենց են վնասել և երբևէ կհասկանան, երբևէ կտեսնեն այն, ինչ տեսնում ես դու: Ներիր և օգնիր նրանց հասկանալ:

Նրա աջ թևի ծայրից մեկ դյույմ հեռավորության վրա թռչում էր շլացուցիչ սպիտակ, աշխարհի ամենասպիտակ ճայրը, նա Ֆլետչերի կողքով սահում էր առանց չնչին ջանքերի, չշարժելով ոչ մի փետուր, թեև Ֆլետչերը թռչում էր գրեթե առավելագույն արագությամբ:

Մի պահ երիտասարդ Ֆլետչերի գլխում ամեն ինչ խառնվեց:

«Ի՞նչ է կատարվում ինձ հետ: Ես խելագարվե՞լ եմ: Մահացե՞լ եմ: Սա ի՞նչ է նշանակում»:

Ցածր, հանգիստ ձայնը մխրձվեց նրա մտքերի մեջ և պատասխան պահանջեց.

— Ֆլետչեր Լինգ անունով ճայ, դու ուզու՞մ ես թռչել:

— ԱՅՈՒ, ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԹՈՉԵԼ:

— Գլետչեր Լինգ անունով ճայ, դու արդյո՞ք այնքան ուժգին ես ուզամ թռչել, որ պատրաստ ես ներել Երամին և սովորել և երբևէ վերադառնալ նրանց մոտ ու աշխատել օգնել նրանց՝ իմանալու այն, ինչ գիտես ինքդ:

Նման փորձված, նման շլացուցիչ արարածի հնարավոր չէր ատել, ինչպիսի հպարտ թռչում էլ որ լիներ Ֆլետչերը, ինչքան էլ խիստ վիրավորած լինեին նրան:

— Այո,— հազիվ լսելի ասաց նա:

— Այդ դեպքում, Ֆլե՛տչ,— քնքուշ ձայնով ասաց փայլատակող արարածը,— եկ սկսենք Հորիզոնական թռիչքից:

---

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

---

Ջոնաթանը դանդաղ պտույտներ էր գործում Հեռավոր Ժայռերի վրա, նա հետևում էր: Այդ ջահել անտաշ Ֆլետչերը գրեթե իդեալական աշակերտ դուրս եկավ: Օդում նա ուժեղ էր, ճարպիկ, շարժունակ և գլխավորը՝ այրվում էր թռչել սովորելու ցանկությամբ:

Հենց նոր նա առկայծեց կողքին, փշաքաղված գործ գունդը խլացուցիչ աղմուկով դուրս լողաց խոյաթռիչքից և ուսուցչի կողքով անցավ ժամում հարյուր հիսուն մղոն արագությամբ: Կտրուկ առաջավրում, և ահա նա արդեն կատարում է ուրիշ վարժություն՝ տասնվեց պարույրանի, ուղղահայաց, դանդաղեցված տակառ, և բարձրաձայն հաշվում է պարույրները.

—... Ութ... ինը... տասը... վա՛՛, Ջոնաթա՛ն, ես արագության սահմաններից դուրս եմ, գալիս... տասնմեկ... ես ցանկանում եմ կանգ առնել այնպես գեղեցիկ ու հստակ, ինչպես դու...



տասներկու... սատանան տանի, ես ոչ մի կերպ չեմ կարողանում... տասներեք... այս վերջին երեք պարույրները... առանց... տասնչ...ա-ա-ա:

Հերթական անհաջողությունը` Ֆլետչերը «նստել էր պոչի վրա», ինչը զայրույթի ու կատաղության առանձնապես բուռն պայթյուն առաջ բերեց: Ֆլետչերն ընկավ մեջքի վրա, սկսեց դաժանորեն պտտվել հակառակ խցանահանի մեջ, իսկ երբ բերանով ազահորեն օդ կլանելով վերջապես ուղղվեց, պարզվեց, որ իր դաստիարակից հարյուր ֆուտ ներքև է թռչում:

— Ջոնաթան, դու ավելորդ ժամանակ ես վատնում: Ես բութ եմ, հիմար: Իզուր տեղը ջանք եմ թափում, մեկ է՝ ոչինչ չի ստացվելու:

Ջոնաթանը նայեց ներքև և գլխով արեց:

— Իհարկե, չի ստացվի, քանի դեռ այդքան կտրուկ ես կանգ առնում: Ամենասկզբում դու կորցրիր ժամում քառասուն մղոն արագություն: Հարկավոր է նույն բանն անել, միայն սահուն: Վստահորեն, բայց սահուն, հասկանում ես, Ֆլե՛տչեր:

Ջոնաթանը իջավ և մոտեցավ երիտասարդ ճային:

— Մի անգամ էլ միասին փորձենք՝ թև թևի: Ուշադրություն դարձրու կանգ առնելուն: Սահուն, շարժումը սկսիր առանց ուստյունների:

Երրորդ անսվա վերջում Ջոնաթանի մոտ հայտնվեց ևս վեց աշակերտ՝ վեցն էլ Աքսորյալներ, նոր տարօրինակ գաղափարով տարված՝ թռչել հանուն թռիչքի երջանկության: Բայց նույնիսկ նրանք ավելի հեշտ բարդ թռիչքներ էին կատարում, քան ըմբռնում էին իրենց վարժությունների նվիրական իմաստը:

— Իրականում մեզնից յուրաքանչյուրը մարմնավորում է Մեծ Ճայի գաղափարը՝ համապարփակ ազատության գաղափարը, թռիչքի ճշգրտությունը ևս մի քայլ է, որ մեզ մոտեցնում է մեր իսկական էության արտահայտմանը,— երեկոները ավիին կանգնած՝ ասում էր Ջոնաթանը,— մեզ համար ոչ մի խոչընդոտ չպետք է գոյություն ունենա: Ահա թե ինչու ենք ձգտում տիրապետել և բարձր արագություններին, և՛ փոքր արագություններին, և՛ բարձրագույն սավառնորդության թռիչքաձևերին...

...Իսկ վերեկային թռիչքներից տանջահար նրա աշակերտների քունը տանում էր: Նրանց դուր էին գալիս գործնական պարապմունքները, որովհետև արագությունը արբեցնում էր, իսկ մարզումները օգնում էին հագեցնել գիտելիքների ծարավը, որը յուրաքանչյուր պարապմունքից հետո ավելի ուժգնանում էր: Բայց նրանցից ոչ մեկը, նույնիսկ Ֆլետչեր Լինգը, չէր կարող պատկերացնել, որ գաղափարների թռիչքը նույնքան իրական է, որքան քամին, ինչպես թռչունի ճախրանքը:

— Ձեր ողջ մարմինը, մի թևի ծայրից մինչև մյուսը,— նորից ու նորից կրկնում էր Ջոնաթանը,— ոչ այլ ինչ է, քան ձեր միտքը գամող շղթաներ, և դուք կփշրեք ձեր մարմինը կապկպող շղթաները...

Բայց ինչ օրինակներ էլ որ բերեր, աշակերտները խոսքն ընդունում էին որպես հետաքրքրաշարժ հորինվածք, իսկ իրենք ամենից շատ քնել էին ցանկանում:

Թեև մեկ ամիս էր անցել, բայց Ջոնաթանն ասաց, որ Երամի մոտ վերադառնալու ժամանակն է:

— Մենք դեռևս պատրաստ չենք,— բացականչեց Հենրի Կելվինը: - Նրանք չեն ուզում մեզ տեսնել: Մենք Աքսորյալ ենք: Մի՞թե կարելի է ներկայությունդ փաթաթել ճայի վզին, որը չի ուզում քեզ տեսնել:

— Մենք իրավունք ունենք թռչել ուր կամենում ենք և լինել այնպիսին, ինչպիսին ստեղծված ենք,— պատասխանեց Ջոնաթանը:

Նա օդ բարձրացավ և դարձավ դեպի արևելք, դեպի հարազատ ափերը, որտեղ ապրում էր Երամը:

Մի քանի րոպե աշակերտները չգիտեին ինչ անել, որովհետև Երամի օրենքն ասում է. «Աքսորյալները երբեք չեն վերադառնում», և տասը հազար տարվա ընթացքում այդ օրենքը երբեք չի խախտվել: Օրենքն ասում է՝ մնացե՛ք, Ջոնաթանը՝ թռե՛ք, և ահա նա արդեն սավառնում է ծովի վրա՝ մեկ մղոն հեռու: Եթե իրենց մի փոքր էլ հապաղեն, նա թշնամի Երամի հետ կհանդիպի մեն-մենակ:

— Մենք ինչո՞ւ պետք է ենթարկվենք օրենքին, եթե մեզ վտարել են Երամից,— շվարած հարցրեց Ֆլետչերը: - Իսկ եթե կռիվ սկսվի, ապա այնտեղ ավելի օգտակար կլինենք, քան այստեղ:

Այսպես այն առավոտ նրանք թռան եկան արևմուտքից՝ ութ ճայ՝ կրկնակի ռմբածև շարքով, թև թևի: Նրանք Երամի խորհրդի ափը կտրեցին-անցան ժամում հարյուր երեսունհինգ մղոն արագությամբ: Ջոնաթանն առջևից էր գնում, Ֆլետչերը սահուն սլանում էր աջ թևով, Հենրի Կելվինը ձախ թևում քաջաբար մարտնչում էր քամու դեմ: Հետո շարքը պահպանելով՝ նրանք դանդաղ թեքվեցին աջ... ուղղվեցին... շրջվեցին թաթերն ի վեր... կրկին ուղղվեցին, իսկ քամին անողորմ տրակում էր ութնյակին:

Ափին առօրյա բարձրածայն վեճ ու կռիվները հանկարծակի մարեցին, ութ հազար աչք ակնապիշ ուղղվեցին Ջոնաթանի ջոկատի կողմը. ճայերին թվաց, թե իրենց գլխավերևում հսկայական դաշույն կախվեց: Ութ թռչուն, մեկը մյուսի ետևից վեր խոյացան, մահվան օղակ կատարեցին և արագությունը նվազագույնի հասցնելով, առանց օրորվելու իջան ավազի վրա: Հետո Ջոնաթանն, ասես ոչինչ չէր պատահել, սկսեց բացատրել սխալները:

— Նախ և առաջ,— քնծիծաղով ասաց նա,— ձեր տեղերը շարքում որոշ ուշացումով գբաղեցրիք...

Միևնույն միտքը կայծակի պես շամփրեց ողջ Երանը: Այս բոլոր թռչուններն Աքսորյալներ են: Եվ նրանք վերադարձել են: Բայց... բայց չի կարող պատահել: Իզուր էր Ֆլետչերը կռվից վախենում, Երանը քարացել էր:

— Ի՞նչ անենք, որ Աքսորյալներ են, իհարկե, Աքսորյալներ են, թող որ Աքսորյալներ լինեն,—  
ասաց ջահելներից մեկը: - Հետաքրքիր է, որտե՞ղ են նրանք այդպես թռչել սովորել:

Մեկ ժամ պահանջվեց, մինչև Երանի բոլոր անդամներին հասավ Տոհմավագի Հրամանը՝  
նրանց վրա ոչ մի ուշադրություն չդարձնել, Աքսորյալի հետ խոսող ճայր ինքն էլ կդառնա  
Աքսորյալ, Աքսորյալին նայող ճայր կխախտի Երանը օրենքը:

Այդ պահից Ջոնաթանը տեսնում էր միայն ճայերի գորշ թիկունքները, բայց թվում էր՝ չի  
նկատում, թե ինչ է կատարվում: Պարապմունքներն անցկացնում էր Խորհրդի ավինն և  
առաջին անգամ փորձեց աշակերտներից քամել այն ամենը, ինչի ընդունակ էին:

— Մարտի՛ն,— օդում տարածվում էր նրա ձայնը,— ասում ես, թե կարողանում ես դանդաղ  
թռչել: Ասելը քիչ է, հարկավոր է ապացուցել: Թռի՛ր:

Չերևացող փոքրիկ Մարտին Վիլյամն այնպես վախեցավ իր դաստիարակի զայրույթից, որ  
սկսեց փոքր արագությունների ժամանակ հրաչքներ գործել:

Նա փետուրներն այնպես էր դասավորում, որ ամենաթույլ քամու ժամանակ բարձրանում էր  
մինչև ամպերը և իջնում գետնին՝ առանց որևէ թափահարումի:

Իսկ Չարլզ-Ռոլանդը բարձրացավ Հողների լեռան կատարը՝ քսանչորս հազար ֆուտ, և սառը,  
նոսր օդից կապտած, իջավ զարմացած, երջանիկ ու վճռականությամբ լի, հաջորդ օրն ևեթ  
վեր բարձրացավ:

Ֆլետչերը, որը բոլորից շատ էր հրապուրվում բարձրագույն սավառնման թռիչքաձևերով,  
հաղթահարեց տասնվեց պարույրանի, ուղղահայաց, դանդաղեցված տակառը, իսկ հաջորդ  
օրը ինքն իրեն գերազանցելով՝ եռակի շրջադարձ կատարեց թևի վրայով: Արևի շլացուցիչ  
շողերը պար բռնեցին ողջ ավիով մեկ, որտեղից նրան թաքուն հեևում էին բազմաթիվ աչքեր:

Ջոնաթանը ոչ մի վայրկյան չէր բաժանվում իր աշակերտներից, հասցնում էր ամեն մեկին մի  
բան ցույց տալ, հուշել, յուրաքանչյուրին առաջ մղել, ուղղություն տալ: Նրանց հետ միասին  
թռչում էր գիշերով, ամպամած երկնքում, փոթորկի ժամանակ, թռչում էր թռիչքի սիրուց, իսկ  
ավինն ճայերը տխուր սեղմվում էին իրար:

Մարզումները ավարտելուց հետո աշակերտները հանգստանում էին ավազի վրա, իսկ որոշ  
ժամանակ անց նրանք սովորեցին Ջոնաթանին ավելի ուշադիր լսել: Նա համակված էր ինչ-որ  
խելագար գաղափարներով, որ ճայերը չէին հասկանում, բայց որոշ մտքեր միանգամայն  
մատչելի էին:

Գիշերները աշակերտների շրջանի ետևում սկսեց ևս մի շրջան գոյանալ. մթության մեջ  
հետաքրքրասեր ճայերը ժամերով լսում էին Ջոնաթանին, և քանի որ նրանցից ոչ մեկը չէր

ցանկանում տեսնել հարևանին ու հարևանն էլ՝ իրեն, արևածագից առաջ բոլորն էլ անհետանում էին:

Վերադարձից մեկ ամիս անց միայն Երամի առաջին ճայը խախտեց սահմանը և ասաց, որ ուզում է թռչել սովորել: Դա Տորենս Լոուելն էր, որն անմիջապես դարձավ Աքսորով խարանված անիծյալ թռչուն և... Ջոնաթանի ութերորդ աշակերտը:

Հաջորդ գիշեր Երամից անջատվեց Կերկ Մեյնարդը: Ձախ թևը քարշ գցած՝ նա ավազի վրա կաղին տալով փռվեց Ջոնաթանի ոտքերի մոտ:

— Օգնիր ինձ,— հագիվ լսելի ասաց նա, կարծես պատրաստվում էր կյանքին անմիջապես հրաժեշտ տալ,— ես աշխարհում ամենից ավելի ուզում եմ թռչել:

— Դե ինչ, ժամանակ չկորցնենք,— ասաց Ջոնաթանը,— ինձ հետ միասին օդ բարձրացիր, և սկսենք:

— Դու չհասկացար: Թևս: Թևս չեն կարողանում շարժել:

— Մեյնարդ, դու ազատ ես, դու իրավունք ունես այստեղ և այժմ անել այն, ինչ կամենում է քո «ես»-ը, քո իսկական «ես»-ը, և ոչ ոք չի կարող քեզ խանգարել: Դա Մեծ Ճայի օրենքն է, դա օրենք է:

— Ասում ես՝ կարո՞ղ եմ թռչել:

— Ես ասում եմ, որ դու ազատ ես:

Այնպես թեթև ու պարզ, ինչպես ասվել էր, Կերկ Մեյնարդը առանց նվազագույն ճիգի տարածեց թևերը և բարձրացավ դեպի մութ երկինքը: Նրա ձայնից Երամն արթնացավ: Հինգ հազար ֆուտ բարձրությունից նա թռքերի ողջ ուժով ճչաց.

— Ես կարող եմ թռչել: Լսո՞ւմ եք: Ես կարող եմ թռչե՛լ:

Արևածագին մոտ հազար ճայ խմբվել էին Ջոնաթանի աշակերտների շուրջը և հետաքրքրությամբ նայում էին Մեյնարդին: Նրանց համար միևնույն էր՝ տեսնո՞ւմ են իրենց, թե ոչ, նրանք լսում էին և աշխատում հասկանալ Ջոնաթանի խոսքը:

Նա խոսում էր շատ պարզ բաների մասին՝ որ ճայն իրավունք ունի թռչելու, որ նա իր բնույթով ազատ է և ոչինչ չպետք է խանգարի նրան ազատ լինել՝ ոչ մի սովորույթ, նախապաշարմունք, արգելք:

— Նույնիսկ Երամի օրենքը,— ճայերի ամբոխից լսվեց մի ձայն:

— Գոյություն ունի միայն մեկ օրենք՝ այն, որ օգնում է լինել ազատ,— ասաց Ջոնաթանը,— ուրիշ օրենք չկա:

— Մի՞թե մենք կսովորենք քեզ նման թռչել,— Ջոնաթանին հասավ մի ուրիշ ձայն,— դու յուրահատուկ ես, դու տաղանդավոր ես, սովորական չես, նման չես ուրիշների:

— Նայեցեք Ֆլետչերին, Լոուելին, Չարլզ-Ռոնալդին, Ջադի Լիին: Նրանք նույնպե՞ս յուրահատուկ են, տաղանդավոր, ոչ սովորական: Ոչ ավելի, քան դու, ոչ ավելի, քան ես: Միակ տարբերությունը, մեն ու միակ տարբերությունն այն է, որ նրանք սկսել են հասկանալ, թե ով են իրենք և իրենց պահում են, ինչպես վայել է ճային:

Նրա աշակերտները, Ֆլետչերից բացի, անհանգստացած շուռումուռ եկան: Նրանք վստահ էին, որ գործի էությունը հենց դա է: Ամբոխը մեծանում էր օրավոր, ճայերը գալիս էին հարցուփորձ անելու, հիացմունք արտահայտելու, ծաղրելու:

— Երանում խոսում են, որ դու Մեծ Ճայի Որդին ես,— մի անգամ առավոտյան բարձր Արագույան մարզական թռիչքից հետո Ջոնաթանի հետ զրուցելիս ասաց Ֆլետչերը,— իսկ եթե ոչ, նշանակում է ժամանակիցդ առաջ ես անցել հազար տարի:

Ջոնաթանը հոգոց արձակեց: «Տգիտության տուրք,— մտածեց նա,— քեզ սատանա կամ աստված են անվանում»:

— Ի՞նչ ես կարծում, Ֆլե՛տչ: Մենք ժամանակից առա՞ջ ենք անցել: Երկար դադար տիրեց:

— Իմ կարծիքով՝ նման թռիչքները հնարավոր են եղել միշտ, պարզապես որևէ մեկը պետք է գլխի ընկներ և փորձեր սովորել այսպես թռչել, իսկ ժամանակն այստեղ կապ չունի: Գուցե մենք մոդայի՞ց ենք առաջ անցել:

— Դա արդեն մի բան նշանակում է,— ասաց Ջոնաթանը, թևի վրայով շրջվեց և միառժամանակ օդում սահեց թաթերը վեր: - Դա ավելի լավ է, քան ժամանակից առաջ ընկնելը:

Դժբախտությունը վրա հասավ ճիշտ մի շաբաթից: Ֆլետչերը մի խումբ նորեկների արագընթաց թռիչքի ձևեր էր ցուցադրում: Յոթ հազար ֆուտ թռչելով, նա արդեն դուրս եկավ խոյաթռիչքից՝ ավիից մի քանի դյույմ բարձրության վրա փայլատակեց երկար գորշ մի ժապավեն: Նրա ճանապարհին հայտնվեց առաջին անգամ օդ բարձրացած մի թռչնակ և սկսեց կանչել մորը:

Ֆլետչեր Լինդը վայրկյանի տասներորդական մաս ունեւր բախումից խուսափելու համար, նա կտրուկ թեքվեց ձախ և ժամում երկու հարյուր մղոնից ավելի արագությամբ մխրձվեց գրանիտե ժայռի մեջ: Ժայռը նրան այլ աշխարհի տանող հսկայական, կոփածո դուռ թվաց: Հեղձուցիչ սարսափ, հարված ու խավար, իսկ հետո Ֆլետչերը սկսեց լողալ ինչ-որ տարօրինա՛կ-տարօրինա՛կ երկնքում՝ մոռանալով, հիշելով և կրկին մոռանալով. նա սարսափահար էր ու տխուր, հուսահատորեն տխուր:

Ձայնը նրան հասավ, ինչպես Ջոնաթան Լիվինգսթոնի հետ առաջին հանդիպման ժամանակ:

— Բանն այն է, Ֆլե՛տչ, որ մեր հնարավորությունների սահմանները ձգտում ենք ընդլայնել աստիճանաբար, համբերատար: Մենք դեռ չենք հասել ժայռի միջով թռչելուն: Ըստ ծրագրի՝ դրանով կզբաղվենք քիչ ավելի ուշ:

— Ջոնաթա՛ն:

— Որին կոչում են նաև Մեծ Ճայի Որդի,— չոր արծազանքեց դաստիարակը:

— Ի՞նչ ես անում այստեղ: Ժա՛յռը: Մի՞թե ես... Արդյոք չե՞մ մահացել:

— Է՛-է, Ֆլե՛տչեր, վե՛րջ տուր, ինքդ մտածիր: Եթե ինձ հետ խոսում ես, ակներևաբար չես մահացել, այդպե՞ս է, թե ոչ: Պարզապես քո գիտակցության մակարդակը կտրուկ փոխվել է. եղածն այս է: Հիմա ընտրիր: Դու կարող ես մնալ այստեղ ու սովորել այս մակարդակի շրջանակներում, որն, ի դեպ, շատ ավելի բարձր է նրանից, որտեղ գտնվում էիր, կամ կարող ես վերադառնալ և շարունակել աշխատել Երամի հետ: Ավագները հույս ունեին, որ դժբախտություն կպատահի, բայց չէին կարծում, թե այսքան ժամանակին կլինի:

— Իհարկե, ես ցանկանում եմ վերադառնալ Երամի մոտ: Ախր նոր էի պարապել սկսել անծանոթ խմբի հետ:

— Հիանալի է, Ֆլե՛տչեր: Հիշո՞ւմ ես, մենք խոսում էինք, որ մարմինը ոչ այլ ինչ է, քան միտք...

Ֆլետչերը գլխով արեց, թևերը տարածեց և բացեց աչքերը, նա պառկած էր ժայռի ստորոտին, իսկ շուրջը խմբվել էր Երամը: Երբ ճայերը տեսան, որ նա շնչում է, բոլոր կողմերից չար, սուր ճիչեր լսվեցին:

— Նա ողջ է: Նա մեռել էր և նորից ողջ է:

— Թևով դիպավ ու կենդանացրեց Մեծ Ճայի Որդին:

— Ո՛չ, ինքն ասում է որդին չէ: Նա սատանա է: Սատանա՛: Հայտնվել է, որ

կործանի Երամը:

Չորս հազար ճայ անհավատալի երևույթից սարսափահար՝ գոռում էին «Սատանա՛», և այդ գոռոցը փոթորկի ժամանակ կատաղած քամու նման մտրակեց Երամին: Այրվող աչքերով, կտուցներն ամուր սեղմած, արյան ծարավով բռնված ճայերն ավելի ու ավելի էին մոտենում:

— Ֆլե՛տչեր, լավ չի՞ լինի հեռանանք նրանցից,— հարցրեց Ջոնաթանը:

— Ես չեմ առարկում...

Նույն ակնթարթին նրանք հայտնվեցին ժայռից կես մղոն հեռավորության վրա, և խելացնոր թռչունների սուր կտուցները մխրձվեցին դատարկության մեջ:

— Ինչո՞ւ աշխարհի ամենադժվար բանը թռչունին ստիպելն է հավատալ, որ ինքն ազատ է,— տարակուսանքների մեջ էր Ջոնաթանը,— չէ որ յուրաքանչյուր ճայ ինքը կարող է համոզվել, եթե միայն մի փոքր մարզվի: Ինչո՞ւ է դժվար:

Ֆլետչերը դեռ թարթում էր աչքերը, նա ոչ մի կերպ չէր կարողանում հարմարվել փոփոխված իրադրությանը:

— Ի՞նչ արեցիր: Ինչպե՞ս հայտնվեցինք այստեղ:

— Դու ասացիր, որ դեմ չես ազատվել ցնորված թռչուններից, ճի՞շտ է:

— Այո, բայց դա ինչպե՞ս...

— Ինչպես ամեն ինչ, Ֆլե՛տչեր: Մարզումներ:

Առավոտյան կողմ Երամը մոռացավ իր խելագարությունը, բայց Ֆլետչերը հիշում էր:

— Ջոնաթա՛ն, հիշո՞ւմ ես, մի անգամ, շատ-շատ վաղուց, ասում էիր, որ սերն առ Երամ այնքան պետք է լինի, որ ստիպի վերադառնալ ցեղակիցների մոտ և օգնել նրանց սովորելու:

— Իհարկե:

— Ես չեմ հասկանում, ինչպե՞ս կարելի է սիրել խելացնոր թռչունների երամը, որ հենց նոր ծագում էր քեզ սպանել:

— Է՛խ, Ֆլե՛տչ: Դու չպետք է սիրես թռչունների խելագար երամը: Դու ամենևին էլ պարտավոր չես չարիքին և ատելությանը սիրով հատուցել: Դու պարտավոր ես մարզվել և այդ թռչուններից յուրաքանչյուրի մեջ տեսնել իսկապես բարի ճային, ապա օգնես նրանց՝ իրենց մեջ տեսնելու հենց նույն ճային: Ահա թե որն է սերը: Հետաքրքիր է, վերջապես ե՞րբ ես հասկանալու այդ բանը:

Ես, ի դեպ, հենց նոր հիշեցի Ֆլետչեր Լինգ անունով բռնկվող երիտասարդ մի ճայի: Բոլորովին վերջերս այդ նույն ճային դատապարտել էին Աքսորի, նա պատրաստ էր կենաց ու մահու կռիվ տալ Երամին և Հեռավոր Ժայռի վրա անձնական օգտագործման իսկական դժողք էր ստեղծել: Նույն Ֆլետչերն այժմ իր երկինքն է ստեղծում և այնտեղ է առաջնորդում իր Երամը:

Ֆլետչերը շրջվեց Ջոնաթանի կողմը, և նրա աչքերում սարսափ փայլատակեց:

— Ես առաջնորդո՞ւմ եմ: Ի՞նչ են նշանակում քո բառերը, ե՞ս եմ առաջնորդում: Այստեղ դաստիարակը դու ես: Դու չես կարող մեզ լքել:

— Չե՞մ կարող: Իսկ դու չե՞ս մտածում, որ գոյություն ունեն ուրիշ երամներ և ուրիշ Ֆլետչերներ, որոնք գուցե դաստիարակի կարիք ավելի են զգում, քան դու, որովհետև դու արդեն դեպի լույս տանող ճանապարհին ես:

— Ե՞ս: Ջո՛ն, ախր ես սովորական ճայ եմ, իսկ դո՛ւ...

— Մեծ ճայի միակ Որդին, այո՞: - Ջոնաթանը հառաչեց, նայեց ծովին: - Այլևս քեզ պետք չեմ: Շարունակիր ինքդ քեզ որոնել, ահա թե ինչ է պետք քեզ: Աշխատիր ամեն օր գոնե մի քայլ մոտենալ իսկական, ամենագոր Ֆլետչերին: Նա է քո դաստիարակը: Դու պետք է սովորես հասկանալ նրան և կատարել այն, ինչ քեզ կթելադրի:

Մի ակնթարթ անց Ջոնաթանի մարմինը ցնցվեց, շողշողաց ինչ-որ հեքիաթային լույսով և սկսեց տարրալուծվել օդի մեջ:

— Թույլ չտաս նրանց իմ մասին դատարկ բաներ խոսել, թույլ չտաս ինձնից աստված սարքել, լա՞վ, Ֆլե՛տչ: Ես ճայ եմ: Ես սիրում եմ թռչել, գուցե...

— Ջոնաթա՛ն:

— Խեղճ Ֆլետչ: Մի հավատա աչքերիդ: Նրանք միայն խոչընդոտներն են տեսնում: Տեսնել՝ նշանակում է հասկանալ, ըմբռնիր այն, ինչ արդեն գիտես և կսովորես թռչել:

Փայլատակունը խունացավ, Ջոնաթանը լուծվեց երկնքի անհունի մեջ:

Քիչ անց Ֆլետչերն իրեն ստիպեց օդ բարձրանալ և ներկայանալ դեռևս բոլորովին խակ նորեկների խմբին որոնք անհամբերությամբ սպասում էին առաջին դասին:

— Նախ և առաջ,— դանդաղ ասաց նա,— դուք պարտավոր եք հասկանալ, որ ճայն անսահմանափակ ազատության գաղափարի մարմնացումն է, Մեծ ճայի կերպարի մարմնացումը և ձեր ողջ մարմինը, մի թևի ծայրից մինչև մյուսի ծայրը, ոչ այլ ինչ է, եթե ոչ ձեր միտքը:

Ջահել ճայերը չարաճճիությամբ նայում էին նրան. «Դե՛, դե՛, բարեկամ, - մտածում էին նրանք,— այդ խոսքերը հազիվ թե օգնեն մահվան օղակ կատարելու»:

Ֆլետչերը հառաչեց:

— Հը՛մ: Այո՛... Ուրեմն այսպես,— ասաց նա քննադատական հայացքով զննելով նրանց: - Եկեք սկսենք հորիզոնական թռիչքից:

Այս բառերն արտասանելուց հետո Ֆլետչերն իսկապես հասկացավ, որ Ջոնաթանի մեջ նույնքան անսովոր բան կար, որքան իր մեջ:

«Սահման գոյություն չունի՞, Ջոնաթան,— մտածեց նա: - Դե ինչ, այդ դեպքում հեռու չէ այն պահը, երբ ամպերի միջից դուրս կլողամ քո ավերի մոտ և քեզ թռիչքի մի քանի նոր ձևեր ցույց կտամ»:

Եվ չնայած Ֆլետչերն աշխատում էր պահանջվող խստությամբ նայել իր աշակերտներին, հանկարծ նրանց բոլորին տեսավ այնպիսին, ինչպիսին իրականում նրանք կային - տեսավ մեկ ակնթարթ, բայց այդ ակնթարթում ոչ միայն հավանեց, այլև սիրեց բոլորին: «Սահման



գոյություն չունի», Ջոնաթան», — ժպտալով մտածեց նա և սլացավ գիտելիքներին հետապնդելու:

---